ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 15

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետ Գ. Միրիջանյանի մոտ 2018 թվականի սեպտեմբերի 24-ին կայացած խորհրդակցության

Մասնակցությամբ՝
ՀՀ Արմավիրի մարզպետի տեղակալներ *Կ.Գրիգորյանի*
Ա.Ղուկասյանի

ՀՀ Արմավիրի մարզպետարանի գլխավոր քարտուղարի պաշտոնակատար *Վ.Վարդազարյանի*

ՀՀ Արմավիրի մարզպետարանի գլխավոր քարտուղարի տեղակալ *Ա.Հովհաննիսյանի*

ՀՀ Արմավիրի մարզպետարանի կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարների

ՀՀ Արմավիրի մարզպետի օգնականների և խորհրդականների

Օրակարգում

1. *ՀՀ Արմավիրի մարզում առկա հրատապ խնդիրների քննարկում:*

/ՀՀ Արմավիրի մարզպետ – Գ.Միրիջանյան/

Քննարկվեցին՝

Հարց 1. <<Ուսուցչի օրվա>> կապակցությամբ ՀՀ Արմավիրի մարզի մանկավարժներին մարզպետի պատվոգրով պարգևատրելու վերաբերյալ:

Հանձնարարական՝
ՀՀ Արմավիրի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետի պաշտոնակատար Ս.Բուդաղյանին.

<<Ուսուցչի օրվա>> կապակցությամբ պատրաստել ՀՀ Արմավիրի մարզպետի պատվոգրեր ՀՀ Արմավիրի մարզի մանկավարժներին պարգևատրելու համար և ներկայացնել ՀՀ Արմավիրի մարզպետի հաստատմանը:
/Ժամկետ 01.10.2018թ./:

Հարց 2. ՀՀ Արմավիրի մարզի համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիաների տրամադրման նպատակով ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով մրցույթների

անցկացման և հաստատված ծրագրերի ֆինանսավորման գործընթացի, ինչպես նաև ՀՀ Արմավիրի մարզում առաջնահերթ լուծում պահանջող խնդիրների վերաբերյալ:

Հանձնարարական՝

ՀՀ Արմավիրի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Վ.Մկրտչյանին,

քաղաքաշինության վարչության պետի պաշտոնակատար Ա. Հովհաննիսյանին.

պատրաստել համապատասխան տեղեկատվություն ՀՀ Արմավիրի մարզի համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիաների տրամադրման նպատակով ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով մրցույթների անցկացման ֆինանսավորման և ՀՀ Արմավիրի մարզում առաջնահերթ լուծում պահանջող խնդիրների վերաբերյալ և ներկայացնել ՀՀ Արմավիրի մարզպետին:

/ժամկետ 01.10.2018թ./:

Հարց 3. ՀՀ Արմավիրի մարզի <<Փարաքարի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ի տնօրենի աշխատանքի վերականգնման գործընթացի վերաբերյալ:

Հանձնարարական՝

ՀՀ Արմավիրի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ Ս.Բուդաղյանին,

իրավաբանական բաժնի պետի պաշտոնակատար Լ. Հարությունյանին.

պատրաստել տեղեկատվություն ՀՀ Արմավիրի մարզի <<Փարաքարի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ի տնօրենի աշխատանքի վերականգնման հետ կապված գործընթացների մասին և ներկայացնել ՀՀ Արմավիրի մարզպետի քննարկմանը:

/ժամկետ 10.09.2018թ./:

Հարց 4. ՀՀ Արմավիրի մարզի մի շարք համայնքներում իրականացվող իրավական և մասնագիտական հսկողության, ազգաբնակչության կողմից ներկայացված դժգոհությունների և դիմում-բողոքների ուսումնասիրման գործընթացի վերաբերյալ:

Հանձնարարական՝

ՀՀ Արմավիրի մարզպետի տեղակալ Կ.Գրիգորյանին, մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Վ.Մկրտչյանին,

մարզպետարանի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության պետ Ա.Ղուկասյանին,

մարզպետարանի իրավաբանական բաժնի պետի պաշտոնակատար Լ.Հարությունյանին.

ՀՀ Արմավիրի մարզի մի շարք համայնքներում իրականացվող իրավական և մասնագիտական հսկողության, ազգաբնակչության կողմից ներկայացված դժգոհությունների և դիմում-բողոքների ուսումնասիրման արդյունքները սահմանված ժամկետներում ներկայացնել ՀՀ Արմավիրի մարզպետի քննարկմանը՝ դրանց համապատասխան իրավական ընթացք տալու համար:

/ժամկետ 01.10.2018թ./:

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ

27.09.2018

X

VERIFIED OCSP 27.09.2018 18:14:51 GMT+4

Подписано: MIRIJANYAN GAGIK 2608810403

ՄԱՐԶՊԵՏ՝

Գ. ՄԻՐԻՋԱՆՅԱՆ

Արձ.՝ Մ.Առուշանյան.